Արձանագրություն N 2
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/007 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«06» Ապրիլի 2022թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գալուստ Գալստյանը.
Անդամներ՝ Ռաֆայել Գրիգորյանը և Զավեն Աղաջանյանը.
Քարտուղար՝ Արթուր Բադալյանը:

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/007» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Ջուզեպպե» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01034318, հասցե՝ Հ. Հովհաննիսյան 24/7, հեռ.: (055) 755-455

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների պլանավորված գները՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	Պլանավորված գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը (առանց ԱԱՀ)	գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ)
1	Մոնիտոր	1,350,000	«Ջուզեպպե» ՍՊԸ	1,125,500	1,350,600
2	Դյուրակիր համակարգիչ	1,200,000	«Ջուզեպպե» ՍՊԸ	450,000	540,000

3. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի, արտադրողի անվանման և տեխնիկական բնութագրի վերաբերյալ տվյալները,
- Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

ներկայացված դիմում հայտարարությունը հանդիսանում է Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված մրցույթի դիմում-հայտարարություն,

- Մասնակցի կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող և հրավերին կից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տվյալները (Հավելված 1.2 կամ Հավելված 1.3):

Ընդունվել է որոշում՝
Կողմ - 3, դեմ՝ – 0

4. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Մեկ աշխատանքային օրով կասեցնել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/007 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը,
2. Առաջարկել «Ջուզեպպե» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 8-ին ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացի 3 հասցեում:
4. Սույն որոշման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/007 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բադալյանին.

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Գալստյան

գնահատող անդամներ՝ _____ Ռ. Գրիգորյան

_____ Զ. Աղաջանյան

քարտուղար՝ _____ Ա. Բադալյան